

ՆԻՐԱ ՍԹՕՈՒՆ
(1938-2013)

Հրեայ արուեստաբանուհի Դոկտ. Նիրա Սթոունը ծնունդ է 15 Հոկտեմբեր 1938ին, Փեթաք Թիքուահում (այժմ՝ Իսրայելում): Միջնակարգ կրթությունն ստացել է Թել-Ավիում, բարձրագույնը՝ Երուսաղեմի Եբրայական Համալսարանում (ԵԵՀ): Դոկտորական ատենախոսություն է պաշտպանել «Երուսաղեմի Հայկական Պատրիարքարանը. Հարանց Վարքը» թեմայով (իրատ. 2007ին): Տարիներ շարունակ եղել է հայկական եւ արեւելեան քրիստոնեական արուեստի դասախոս ԵԵՀի Արուեստի Պատմության բաժնում: Եղել է նաեւ Դաքինի Չեսթըր Բիթի Գրադարանի խորհրդական, կազմել այնտեղի հայերէն ձեռագրերի եւ մետաղեայ կազմերի քարտարանները (*Catalogue of the Additional Armenian Manuscripts in the Chester Beatty Library in Dublin* (2012): Նրա հետաքրքրությունների ծիրը կազմել են Երուսաղեմի արուեստը, հայ արուեստը, Ադամը եւ Եան հայ արուեստում, սատանայի կերպարը հայ եւ բիզանդական արուեստում, Սուրբ Երկրի խճանկարները թեմաները են::

Ամուսնու՝ ականատր հայագետ Մայքլ Սթոունի հետ հրատարակել է անգլերէն աշխատություններ՝ հայագիտական, քրիստոնեագիտական, արուեստագիտական տարբեր հրատարակություններում: Առանձին գրքերով լոյս է տեսել նրա *The Kaffa Lives of the Desert Fathers: A Study in Armenian Manuscript Illumination* (1997), իսկ ամուսնու հետ՝ *The Armenians: Art, Culture and Religion* (2007) գրքերը:

Սթոունը եղել է Հայագիտական Ուսումնասիրությունների Միջազգային Ընկերակցության, Իսրայելի Բիզանդագետների Միության, Հրեական Արուեստի Ուսումնասիրության Ամերիկեան Ակադեմիայի Կրօնական Կենտրոնի անդամ:

Նիրա Սթոունը մահացել է 26 Յունիս 2013ին, Երուսաղեմում:

ԶԱՌԱ ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆ
(1951-2013)

Երաժշտագետ, պրոֆեսոր Զառա Տեր-Ղազարեանը ծնունդ է 17 Ապրիլի 1951ին, Երեւանում: Հայրը՝ Հայկ Տեր-Ղազարեանը, նկարիչ էր, մայրը՝ Մերի Սաղեանը, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղեանի Անուան Գրականության Ինստիտուտի երկարամեայ գիտաշխատող:

Ուսանել է Չայկովսկու Անուան Միջնակարգ Մասնագիտական Դպրոցում, այնուհետեւ Կոմիտասի Անուան Պետական

Կոնսերվատորիայում: 1984ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Արամ Խաչատրեանի Ստեղծագործութեան Վաղ Շրջանի Ձեւատրումը (Արեւելքի եւ Արեւմուտքի Աանդոյթի Լոյսի Ներքո)» թեմայով: 1973-2013՝ Կոնսերվատորիայում դասաւանդել է արեւմտաեւրոպական երաժշտութեան պատմութիւն: Չայկովսկու անուան դպրոցի 50ամեակին է նուիրել *Ճանապարհի Դէպի Պառնաս* գիրքը (1991, Մարգարիտ Յարութիւնեանի հետ համատեղ): Նա դասաւանդում էր Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայում եւ անդամ էր Հայաստանի Կոմպոզիտորների եւ Երաժշտագէտների Միութեան:

Նրա գիտական հետաքրքրութիւնների կիզակէտը հայ երաժշտութիւնն էր ու Արամ Խաչատրեանը: Կազմել եւ խմբագրել է Տատիանա Հայրապետեանի *Մեղեդիներ Իմ Յուշերի...* (2005, ռուսերէն) հատորը: Եղել է նաեւ միջանի գրքերի խմբագիրը եւ երաժշտական խմբագիրը (Արամ Խաչատրեան. *Նամակները (1928-1978)* (1983) եւ *Նամակներ (1934-1978)* (1995), Ղազարոս Սարեան, *Սոնադ Թաւջութակի եւ Դաշնամուրի Համար* (1998), Էմին Արիստակէսեան, *Ջութակի եւ Նուագախմբի Կոնցերտ* (1999), Գեորգ Արմէնեան, *Ղօղանջներ* (1999), Սերգէյ Աղաջանեան, *Չորս Պոլիմոնոքիա* (2001), *Անմոռաց Երգեր* (կազմ.՝ Հերոս Մինասեան, 2011): Յետմահու լոյս տեսաւ նրա *Արեւմտաեւրոպական Երաժշտութեան Պատմութիւն*. Հին Աշխարհից Մինչեւ XIX Դար առաջին հայալեզու դասագիրքը (2014):

Զառա Տէր-Ղազարեանը մահացաւ 25 Սեպտեմբեր 2013ին, Ժնեւում:

ՕԼԷԱ ՆՈՒՐԻՋԱՆԵԱՆ

olya@vem.am



ԻՐԱ ԲԱԲԱՅԵԱՆ

(1939-2014)

Արուեստագիտութեան թեկնածու Իդա Արսենտիի Բաբայեանը ծնուել է 9 Նոյեմբեր 1939ին Բաքուում, ծառայողի ընտանիքում: 1963ին աւարտել է ԵՊՀ Բանասիրական Ֆակուլտէտը՝ ռուսաց լեզու եւ գրականութիւն մասնագիտութեամբ:

1963ին աշխատանքի է անցել Հայկական ՍՍՀ ԳԱ տպարանում որպէս սրբագրիչ, 1964ին տեղափոխուել *Հայաստանի Կենսաբանական Հանդէս* որպէս աւագ գրական աշխատակից:

1969ից Բաբայեանի գիտաստեղծագործական գործունէութիւնն անխզելիորէն կապուում է Հայկական ԽՍՀ ԳԱ Արուեստի Ինստիտուտի հետ. նա աշխատանքի է անցնում ինստիտուտի Թատրոնի Բաժնում, սկզբում որպէս կրտսեր գիտաշխատող: 1987ին պաշտպանել է

թեկնածուական ատենախօսությին եւ ստացել արուեստագիտութեան թեկնածուի գիտական աստիճան: 2009ից Բաքայեանը ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի Սփիւռքահայ Արուեստի եւ Միջազգային Կապերի Բաժնի աագ գիտաշխատող էր:

ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտում շուրջ կէս դար Բաքայեանն անմնացորդ նուիրումով ծառայեց հայ թատերական արուեստին: Նրա գրչին են պատկանում արժէքաւոր գորքեր ու գիտական յօդածներ, այդ թում՝ հայ ականաւոր բեմադրիչ Վարդան Աճէմեանի մասին *Վարագոյրի Երեսում* (1982, 2006), *V Masterskoy Vardana Adjemyana* (Վարդան Աճէմեանի արուեստանոցում, 2012) եւ *Վարդան Աճէմեանի Աշխարհը Վաւերագրերում* (2006) աշխատութիւնները: 2008ին հրատարակուեց նրա *Sundukyan Na Gruzinskoy Scene XIX Veka (1874-1903) (Սունդուկեանը ԺԺ. Դարի վրացական թատրոնում, 1874-1903)* մենագրութիւնը:

Իդա Բաքայեանի գրքերի շնորհիւ աճէմեանագիտութիւնը հարստացաւ եւ երկու բարձրարժէք աշխատութիւններով՝ իրենց տեսակի մեջ աննախադէպ ու շատ կարեւոր: *Վարդան Աճէմեանի Աշխարհը Վաւերագրերում* ստուարածաւալ աշխատութիւնը, Վարպետի կեանքի եւ ստեղծագործական գործունէութեան տարեգրութիւնն է: Աշխատութեան մէջ առաջին անգամ գիտական շրջանառութեան են դրում ցարդ անյայտ փաստեր, վաւերագրեր, անտիպ նամակներ, գրութիւններ, արխիւային նիւթեր, որոնք նոր լոյս են սփռում արուեստագէտի կեանքի հարուստ ուղու վրայ:

Վարագոյրի Երեսում աշխատութեան մէջ ընթերցողի աչքի առջեւ յառնում է Աճէմեանի ստեղծագործական աշխատանոցը՝ բեմադրիչի հինգ բեմադրութիւնների փորձերի գրառումները, նաեւ Վարպետի՝ օպերային բեմադրութեան բարձրարուեստ նմուշներից մէկը եւս՝ Սպենդիարեանի *Ալմաստ* օպերայի բեմադրութիւնը (1971): *Վարագոյրի Երեսում* գրքում առաջին անգամ ներկայացուած են բազմաթիւ վաւերագրական նիւթեր եւ Աճէմեանի բոլոր՝ թոով 52, գծանկարները:

Իդա Բաքայեանը մահացաւ 6 Ապրիլի 2014ին, Երեւանում:

ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտ

ՕԳՈՍՏԻՆՈՍ ՎՐԴ. ՍԵՔՈՒԼԵԱՆ
(1921-2014)

Մատենագիր, դրամագէտ, Մխիթարեան Միաբանութեան երիցագոյն անդամ, Հայր Օգոստինոս Վրդ. Սեքուեան ծնած է 19 Սեպտեմբեր 1921ին Թրանսիլվանիոյ Ճուրճով քաղաքը (այժմ՝ Ռումանիա): Իր նախնիք, 1319ին, Անիէն գաղթած են նախ Ղրիմ ու Մոլդաւիա եւ 1654ին եկած Թրանսիլվանիա:

Նախնական ուսումը աւարտելէ ետք իր ծննդավայրի նախակրթարանին մէջ, 1931ին, հազիւ տաս տարեկան, մտած է Վիեննայի Մխիթարեան կղերանոցը: 31 Դեկտեմբեր 1944ին կը ձեռնադրուի կուսակոսն քահանայ: 1945-46՝ կը ստանայ Մագիստրոսի տիտղոսը Վիեննայի Պետական Համալսարանէն:

Ի շարս այլ պաշտօններու, 1957-1961՝ Պէյրութի արուարձան Հազմիէի Մխիթարեան Վարժարանէն ներս կը վարէ փոխտնօրէնի եւ ուսուցչի պաշտօն: Կրկին կը վերադառնայ Լիբանան եւ 1972-1978՝ կը ստանձնէ Մխիթարեան Վարժարանի տնօրէնութիւնն ու ժառանգաւորաց բաժնի պատասխանատուութիւնը:

1978-1992՝ եղած է Ընհանուր Աթոռակալ Վիեննայի Միաբանութեան: 1992-2009՝ եղած է տնօրէն Լոս Անճելըսի Մխիթարեան Վարժարանին: 1999ին Վարժարանը փոխադրած էր Թահանկայի նոր հողամասը: Մխիթարեան Միաբանութիւնը վերջին յիսնամեակին չէ ունեցած նման եկեղեցական մը որ յաջողած ըլլայ այսպիսի հոյակապ կալուած մը ձեռք ձգել, ամբողջութեամբ վճարուած, զայն յանձնելով իր Միաբանութեան:

Ունի բազմաթիւ բանասիրական, դրամագիտական, ծիսագիտական եւ տոմարագիտական աշխատանքներ, նամանաւանդ *Հանդէս Ամսօրեայի* մէջ տպուած: Հրատարակութեան պատրաստած է Հին եւ Նոր Կտակարաններու աշխարհաբար թարգմանութիւնը: Կազմած եւ հրատարակած է *Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մխիթարեան Մարենադարանին* Ի Վիեննա ձեռագրացուցակի Գ. Հատորը (Վիեննա, 1983):

Վախճանեցաւ 19 Յուլիս 2014ին, Լոս Անճելըսի մէջ:

ՈՍԿԱՆ ՄԻԽԻԹԱՐԵԱՆ

ՍԷՆ ԱՐԵՒԻՇԱՏԵԱՆ

(1928-2014)



Փիլիսոփայ, ակադեմիկոս Սէն Արեւշատեանը ծնուել է 7 Յունուար 1928ին Երեւանում: Հայրը՝ Սուրէն Արեւշատեանը, Թատերական Ինստիտուտի դասախօս էր: 1951ին գերազանցութեամբ աւարտել է ԵՊՀ

Պատմության Ֆակուլտետը: 1951-1954՝ ՀՍՍՀ ԳԱ ասպիրանտուրայում մասնագիտացել է հայ հին և միջնադարեան փիլիսոփայության պատմության մեջ: 1956ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ԺԴ.-ԺԵ. դարերի ականաւոր գիտնական Գրիգոր Տաթեւացու փիլիսոփայական հայեացքների վերաբերեալ: 1954-1959՝ եղել է ՀԽՍՀ ԳԱ Փիլիսոփայության և Իրաւունքի Սեկտորի գիտաշխատող: 1959 Ապրիլին աշխատանքի է անցել ՀԽՍՀ Մինստրների Խորհրդին Աղընթեր Հին Ձեռագրերի նորաստեղծ Գիտահետազոտական Ինստիտուտում՝ Մատենադարանում, որպէս սկզբնաղբիւրների գիտական թարգմանութեան բաժնի վարիչ: 1972ին ստացել է փիլիսոփայական գիտութիւնների դոկտորի աստիճան: 1973ին ղեկավարել է Մատենադարանի Հին Բնագրերի Ուսումնասիրութեան և Հրապարակման Բաժինը, իսկ 1982-2007՝ 25 տարի, եղել է Մատենադարանի տնօրէն, նաեւ համատեղութեան կարգով եղել է ՀԽՍՀ ԳԱ Պալմարանասիրական Հանդէսի պատասխանատու քարտուղարը (1958-1960), Փիլիսոփայութեան և Իրաւունքի Ինստիտուտի աագ գիտաշխատող՝ 1972-1979, իսկ մինչեւ 2014՝ ինստիտուտի Գիտաթեմատիկ Խմբի գիտական ղեկավարն էր: 1975-1978՝ դասաւանդել է ԵՊՀում:

1982ին Արեւշատեանն ընտրուում է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996ին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, 2007-2014՝ Մատենադարանի Կառավարման Խորհրդի նախագահ, Տնօրէնի Վիսաւոր Խորհրդական:

Հեղինակ է աւելի քան 150 գիտական աշխատութիւնների, այդ թում՝ 30 մենագրութիւնների և բազմաթիւ յօդաւածների:

Արեւշատեանի գիտական գործունէութեան կարեւոր մասն են կազմում հայ իմաստասէրներ Մեսրոպ Մաշտոցի, Եզնիկ Կողբացու, Դաւիթ Անյաղթի, Անանիա Շիրակացու, Յովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթեւացու երկերի ռուսերէն թարգմանութիւնները: Երեւանում առանձին գրքերով լոյս են տեսել նրա *Գրիգոր Տաթեւացու Փիլիսոփայական Հայեացքները* (1957, ռուսերէն), *Անանիա Շիրակացի. Կոսմոգրաֆիա* (1962, ռուսերէն), *Դաւիթ Անյաղթ «Մեկնութիւն Ի Վերլուծական Արիստոտելի»* (1967), *Փիլիսոփայական Գիտութեան Ձեւաւորումը Հին Հայաստանում (5-6րդ դդ.)* (1973), *Դաւիթ Անյաղթ (1980), Role of David the Invincible in the Development of Ancient Armenian Philosophy* (1980), *Գլածորի Համալսարանը Միջնադարեան Հայաստանի Լուսաւորութեան Կենտրոն* (1984), *Հայ Փիլիսոփայութեան Պալմարանի*. Հին Շրջան և Վաղ Միջնադար (2007), *Սուրբ Գրիգորի Վարդապետութիւնը* (2007), *Գրիգոր Տաթեւացի. Սոցիոմոնի Առակների Մեկնութիւնը* (2009): Մենագրութիւններից իւրաքանչիւրը բովանդակում

է նոր գաղափարներ, մշակոյթի պատմութեան ժամանակաշրջանների նոր իմաստաւորում, գրաւոր յուշարձանների նոր ընթերցում:

Արեւշատեանի գիտական վաստակի կարեւորագոյն մասը հայ փիլիսոփայութեան պատմութեան եւ առհասարակ հայ հին եւ միջնադարեան հոգեւոր մշակոյթի պատմութեան աղբիւրագիտական հիմքի ամրապնդումն ու հարստացումն էր: Նրա գիտական գործունէութեան մէջ համատեղում էին պատմաբանը եւ մշակութաբանը, ազգագրագէտն ու հնագէտը, լեզուաբանն ու բանասէրը: Արեւշատեանի գործերի մի զգալի մասը վերաբերում է անտիկ շրջանից քրիստոնէականին անցմանը՝ Ե.-Է. դարերին, երբ դեռեւս ուժեղ էին անտիկ ասանդները, գեղագիտական համակարգը, որոնց գումարուել էին նաեւ քրիստոնէական աշխարհայեացքը եւ եկեղեցական դիրքորոշումը: Իր ուսումնասիրութիւններով նա ամբողջացրեց եւ պարբերացրեց հայ փիլիսոփայական մտքի պատմութեան ընթացքը՝ Անյաղթից մինչեւ Տաթեւացի եւ այլք: Այս տեսանկիւնից դասական օրինակ է Դաւիթ Անյաղթի գործերի նրա համակողմանի ուսումնասիրութիւնը:

Մեծ է Արեւշատեանի վաստակը Անյաղթի փիլիսոփայական ժառանգութեան ուսումնասիրման եւ նրա միջազգային ճանաչման գործում: 1960-1980՝ հրատարակել է Անյաղթի երեք աշխատութիւնների քննական բնագրերը՝ ռուսերէն զուգահեռ թարգմանութեամբ, առաջաբանով եւ ծանօթագրութիւններով: Կազմել ու աշխարհաբար թարգմանութեամբ հրատարակել է նաեւ Անյաղթի երկերի հատորը: Նրա առաջաբանով եւ ծանօթագրութիւններով 1975ին Մոսկուայում «Փիլիսոփայական ժառանգութիւն» մատենաշարով ռուսերէն լոյս տեսաւ հայ մտածողի երկերը, որը վերահրատարակուեց Անյաղթի ծննդեան 1500ամեայ յոբելեանի օրերին: Վերջապէս, յոբելեանի աղթիւ Արեւշատեանը պատրաստել, ծանօթագրել եւ ծաւալուն առաջաբանով հրատարակել է Անյաղթի փիլիսոփայական չորս երկերի ժողովածուն: Հնարաւոր չէր լինի առանց Արեւշատեանի անելի քան քսանամեայ նախապատրաստական տքնաջան աշխատանքի իրագործել Դաւիթ Անյաղթի ծննդեան 1500ամեայ յոբելեանի տօնակատարութիւնը եւ այն էլ այդպիսի ծաւալով ու միջազգային հնչեղութեամբ: Անյաղթի *Սահմանք Իմաստասիրութեան* երկի Արեւշատեանի կազմած գրաբար քննական բնագիրը դարձել է դասական բնագիր՝ այդ երկի օտարազգի թարգմանիչների եւ ուսումնասիրողների համար:

Արեւշատեանը Մատենադարանի՝ իբրեւ գիտահետազոտական ինստիտուտի ձեւաւորման առաջին իսկ օրից աշխատանքի անցաւ այնտեղ, եւ հիմնադիր տնօրէնից՝ ակադեմիկոս Լեւոն Իսաչիկեանից յետոյ ղեկավարեց այն: Իսաչիկեանի եւ միւս համախոհների հետ նա

Մատենադարանը սկզբնաւորողներից եւ կերտողներից էր: Նրանք են համայնել այն գիտական աշխատակիցներով՝ ուղենշել եւ հունաւորել նրա ապագան: Այդ ստեղծարար աշխատանքի շնորհիւ օր օրի աճել է Մատենադարանի հեղինակութիւնը հայրենիքում եւ ի սփիտս աշխարհի:

Անգամ տասնամեակների դաժան փորձութիւնների ընթացքում Արեւշատեանը կարողացել է անխաթար եւ անկորուստ պահել Մատենադարանի ներքին կառոյցը, հարստացնել նրա հաւաքածոները:

Նա բարոյական բացառիկ նկարագրի տէր մարդ էր: Մինչեւ կեանքի վերջին օրերը զբաղուած էր աշխուժ գիտական գործունէութեամբ, իր կարեւոր նպաստն էր բերում ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի աշխատանքներին:

Ակադեմիկոս Սէն Արեւշատեանը Երեանի պատուաւոր քաղաքացի էր, «Պօ-Արաքս» ընկերութեան (Վենետիկ) անդամ, Փիլիսոփայական Միջազգային Ակադեմիայի իսկական անդամ, «Արարատ» Միջազգային Ակադեմիայի (Փարիզ) թղթակից անդամ: Նա ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր էր (1978), 2004ին արժանացել է Հայ Առաքելական Եկեղեցու «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանի, 2008ին պարգեատրուել ՀՀ Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան ոսկէ մեդալով, 2010ին՝ «Հայրենիքին Մատուցած Ծառայութիւնների Համար» առաջին աստիճանի մեդալով:

Սէն Արեւշատեանը մահացաւ 25 Յուլիսի 2014ին, Երեանում:

ՀՀ ԳԱԱ Նախագահութիւն
Մաշտոցի Անուան Մատենադարանի Տնօրէնութիւն

ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆ
(1913-2014)

Բազմավաստակ ուսուցիչ եւ կրթական գործի կազմակերպիչ, նախկին տնօրէն Երուանդ Պապայեան ծնած է 25 Մայիս 1913ին Այնթապ: Զաւակն է Ներսէս Ա. քահանայ եւ երիցուհի Նեկտար Պապայեաններու: Նախակրթութիւնը ստացած է Հալէպի Կիլիկեան եւ Հայկազեան վարժարաններուն մէջ, իսկ երկրորդական ուսումը՝ Հալէպի ֆրանսական Լիսէ Վէյգանի մէջ, աւարտելով 1933ին: Կիլիկեան Վարժարանին որպէս ուսուցիչ ծառայած է 1933-1940, իսկ որպէս տնօրէն՝ 1940էն մինչեւ 1953:

Հիմնադիրներէն է Հալէպի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան, որուն ատենապետը եղած է հիմնուած տարին՝ 1935ին: Հիմնադիրներէն է նաեւ Հալէպի առաջին մշակութային հայ երիտասարդական միութեան՝ «Արեգ»ին:

Ընտանեօջ Պէյրութ փոխադրուած են 1953ին:

1953-54ին հետեւած է Սէն Ժոզէֆ Համալսարանի հայագիտութեան եւ արեւելեան դպրութեան դասընթացքներուն եւ ստացած համալսարանական վկայական: 1961ին մանկավարժական ճիւղին մէջ մասնագիտանալու համար դասընթացքներու հետեւած է Centre International d'Etudes Pedagogiquesին՝ Կիլպէնկէան Հիմնարկութեան աջակցութեամբ:

Պէյրութի Վահան Թէքեան Վարժարանին ծառայած է որպէս տնօրէն 32 տարի՝ 1953էն սկսեալ: 1986ին վերջնականապէս հաստատուած է Լոս Անճելըս:

1983ին, Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը իրեն շնորհած է «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշան յատուկ կոնդակով, Լիբանանի Կրթական Նախարարութիւնը զինք պարգեւատրած է Արժանեաց կրծքանշանով: 2003ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. Վեհափառ իրեն շնորհած է Ս. Մեսրոպ Շքանշանը:

1961-1963՝ հրատարակած է աշխարհագրութեան հայերէն դասագիրքերու շարք մը, Օննիկ Սարգիսեանի եւ Սիմոն Սիմոնեանի գործակցութեամբ: Աշխատակցած է սփիւռքահայ մամուլին:

Ունի հրատարակած գիրքեր՝ *Ժողովուրդին եւ Հայրենիքին Հետ*, 1983, *Պատմութիւն ՀԲԸՄի* (դասագիրք, 1989), *Յիշատակներու Արահերներով* (1998), եւ խմբագրած է *Պատմութիւն Այնթապի Հայոց*, Գ. Հապորը (1994):

Երուանդ Պապայեան իր մահկանացուն կնքեց 6 Օգոստոսի 2014ին, Լոս Անճելըս:

ՅԱԿՈՐ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ



ԷՄՍԱ ԿՈՍՏԱՆԴԵԱՆ
(1934-2014)

Կեանքի 81րդ տարում մահկանացուն կնքեց պատմաբան Էմմա Կոստանդեանը, որն իր մեծ աւանդը ներդրեց արեւմտահայութեան ժԹ. դարի պատմութեան տարբեր խրթին հիմնահարցերի գիտական ուսումնասիրութեան ասպարէզում:

Կոստանդեանը ծնունդ է 1934ին Կիրովական քաղաքում (այժմ՝ Վանաձոր), ուր ստացել է նախնական կրթութիւնը: 1951-1956ին ուսանել է ԵՊՀ Բանասիրական Ֆակուլտէտի Հայոց Լեզուի եւ Գրականութեան բաժնում: 1958ին աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտում իբրեւ լաբորանտ,

յետագայում զբաղեցրել այլ հաստիքներ, իսկ 2003-2012ին իրականացրել է Նոր Պատմության Բաժնի վարիչի պարտականությունները: 1964ին ընդունելով ասպիրանտուրա, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսեանի ղեկավարությամբ 1971ին պաշտպանել է «Գարեգին Սրուանծտանցի Հասարակական-Քաղաքական Գործունեությունը» թեմայով թեկնածուական ատենախոսություն: Պատմական գիտությունների դոկտորի աստիճան ստացել է 1999ին՝ Մկրտիչ Իսիմեանի հասարակական-քաղաքական գործունեությանը նուիրում ատենախոսությունը պաշտպանելուց յետոյ:

Կոստանդեանի գիտական գործունեությունն անքակտելիորեն շաղկապում էր ՀՀ ԳԱԱ Պատմության Ինստիտուտի հետ, ուր նա աշխատել է աելի քան կես դար եւ հեղինակել շուրջ հարիւր տարաբնոյթ գիտական ուսումնասիրություններ: Դրանց թում հարկ է առանձնացնել *Գարեգին Սրուանծրեանց (Կեանքը եւ Գործը)* (1979, 2008), *Մկրտիչ Իսիմեան: Հասարակական-Քաղաքական Գործունեությունը* (2000, 2008), *Ակնարկներ Արեւմտահայ Մշակութային եւ Հասարական-Քաղաքական Կեանքի Պատմության (ԺԺ. Դարի 80ական Թուականներ)* (2005) մենագրությունները եւ *Հայագիտական Ուսումնասիրություններ* (2013) յօդուածների ժողովածուն: Նրա խմբագրությամբ է լոյս տեսել Գարեգին Սրուանծտանցի *երկերի* երկրորդ հատորը (1982):

Կոստանդեանի գիտական հետաքրքրությունների շրջանակները կենտրոնացում էին մասնատրապէս Արեւմտեան Հայաստանի ԺԺ. դարի երկրորդ կէսի հիմնախնդիրների ուսումնասիրության վրայ: Նրա ուշադրության կենտրոնում էին ոչ միայն արեւմտահայ կեանքում տեղի ունեցած հասարակական, քաղաքական, մշակութային եւ կրթական տեղաշարժերը, այլեւ ազգային-ազատագրական շարժումների ելելջները: Այս առումով յատկանշական է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Իսիմեանին նուիրում նրա մենագրությունը, ուր թէ՛ ռուսական կենտրոնական եւ թէ՛ հայկական տարբեր արխիւներից քաղուած նորայայտ փաստաթղթերի մանրազնին քննութեան հիման վրայ, նա հետեւել է հայ հասարակական մտքի զարգացման առանձնայատկություններին եւ ազգային-ազատագրական պայքարի առաջընթացին, միաժամանակ բացայայտել Իսիմեանի դերը հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակութիւն ունեցած պատմական իրադարձություններում:

Հարկ է նաեւ արժեւորել հանգուցեալի աւանդն արեւմտահայ մամուլի ուսումնասիրութեան գործում: Նա պատրաստել է *Կոստանդնուպոլսի «Արեւելք» Օրաթերթը* (2003) մենագրությունը, առանց իր սուղ ժամանակն ափսոսալու կազմել է *«Արծուի Վասպուրական» Ամսագրի*

Մալբենագիտություն (1855-1856, 1858-1864) (2006) հատորը եւ դրանով իսկ մեծապէս ժանդակել բոլոր նրանց, ովքեր ցանկութիւն կը դրսեւորեն ուսումնասիրել ժԹ. դարի երկրորդ կէսի արեւմտահայ մամուլի պատմութիւնը:

Կասկածից վեր է Կոստանդեանի ներդրումը ժԹ. դարի նշանաւոր հայ հոգեւոր գործիչների քաղաքական եւ կրօնական գործունէութեան մանրագնին ուսումնասիրութեան բնագաւառում: Նա կեանքի վերջին տարիներին ուշադրութիւնը բեւեռեց Մաղաքիա Օրմանեան պատրիարքի գործունէութեան վրայ, որին ցանկանում էր նուիրել առանձին մենագրութիւն: Ցաւօք, նրան վիճակուած չէր իրականացնել այս մտադրութիւնը: Նրա վերջին, ի դէպ, մեծ այժմէականութիւն ունեցող՝ «Մաղաքիա Օրմանեանի Բանախօսութիւնները» խորագրով յօդուածը լոյս ընծայուեց նրա մահից միջանի օր անց եՊՀ Հայագիտութեան Հարցեր (2014, թիւ 2) քառամսեայ պարբերականում: Հայ Առաքելական Եկեղեցին 2012ին նրան պարգեատրեց «Սուրբ Մեսրոպ-Սուրբ Սահակ» շքանշանով:

Կոստանդեանն անմասն չմնաց նաեւ ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի կողմից տպագրութեան պատրաստուող քառահատոր Հայ Ժողովրդի Պատմութիւնի հրատարակութեան աշխատանքներին, հանդէս եկաւ իրբեւ երրորդ հատորի առաջին գրքի (2010) պատասխանատու խմբագրի տեղակալ եւ համահեղինակ: Սակայն առաւել էականը, այն բծախնդիր վերաբերմունքն էր, որ Նոր Պատմութեան Բաժնի նիստերում նա ցուցաբերում էր տոյն հատորի համար նախատեսուած յօդուածների քննարկման ժամանակ: Երկար տարիներ աշխատելով Կոստանդեանի գլխատրած բաժնում, տողերիս հեղինակն իրաւասու է հաւաստելու, որ նա համանման մօտեցում էր դրսեւորում նաեւ մեր կողմից քննարկուող բոլոր ձեռագիր աշխատանքների՝ մենագրութիւնների, ատենախօսութիւնների նկատմամբ: Դա պայմանաւորուած էր ոչ միայն նրան բնորոշ պատասխանատուութեան բարձր զգացումով, այլեւ շատ քչերին յատուկ անգիջում սկզբունքայնութեամբ, որը նրան զարդարող՝ նրա բնատրութեան հիմնական առանձնայատկութիւնն էր: Յիշում եմ դեռեալ խորհրդային տարիներին այն քննադատական ելոյթները, որոնցով նա բազմիցս հանդէս էր գալիս Պատմութեան Ինստիտուտի ժողովներում եւ գիտական խորհրդի նիստերում, այնուհետեւ նոյն ինստիտուտին կից գործող՝ հայ ժողովրդի պատմութեան գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդում, որի անդամներից էր կեանքի վերջին տարիներին:

Կոստանդեանը չէր զլանում նաեւ գիտական գործունէութիւնը երբեմն համատեղել մանկավարժական աշխատանքի հետ եւ նոյնիսկ

տարեց հասակում դասաւանդում էր Բրիստօլի Անուան Լեզուաբանական Համալսարանում ու Գեղարուեստի Ակադեմիայում՝ իր նպաստը բերելով երիտասարդ սերնդի կրթութեան շնորհակալ գործին: Նա մասնակցում էր նաեւ միջազգային գիտաժողովների. Խրիմեանին եւ հայկական ազգային-ազատագրական շարժումներին նուիրում գեկուցումներով հանդէս է եկել ԱՄՆ-ի եւ Իրանի հայ համայնքների համար:

Պատմաբանի անժխտելի արժանիքներից է նրան խիստ քնորոշ եւ անթաքոյց հայրենասիրութիւնը: Չնայած առաջադիմած տարիքին եւ առողջական անկայուն վիճակին, նա չէր զլանում այցելել ՀՀ տարածքում տեղակայուած տարբեր գորամասեր եւ ելոյթներ ունենալ մեր հայրենիքի երիտասարդ պաշտպանների համար, ոգետրել նրանց:

Էմմա Կոստանդեանը, որի մահը մեծ կորուստ էր ոչ միայն Պատմութեան Ինստիտուտի, այլեւ հայ ժողովրդի Նոր Պատմութեան ուսումնասիրողների համար, մահացաւ 23 Օգոստոս 2014ին Երեւանում:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ

ՌՈՒԶԱՆ ՍԱՐԳՍԵԱՆ (1959-2014)

Պատմական գիտութիւնների թեկնածու Ռուզան (Ռուզաննա) Սարգսեանը ծնուել է 3 Յուլիս 1959ին, Երեւանում, ականատր արեւելագէտ, ակադեմիկոս Գագիկ Սարգսեանի ընտանիքում: Մանկուց նա հնարաւորութիւն է ունեցել իմօտոյ շփուել գիտութեան եւ արուեստի ներկայացուցիչների հետ: Ռուզանի մեծհայրը՝ Խորէն Սարգսեանը, եղել է ճանաչուած բանասէր Հայաստանում, իսկ մայրը՝ երաժշտագէտ Կարինէ Խուդաբաշեանը, մինչ օրս ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի առաջատար գիտաշխատող է: Ընտանիքում առկայ գիտութեան եւ արուեստի մթնոլորտը շատ բանով պայմանաւորել է նրա կեանքի ուղին: 1981ին նա աւարտել է ԵՊՀ Պատմութեան Բաժինը: Որոշ ժամանակ Հայկական Հանրագիտարանում աշխատելուց յետոյ նրա ողջ աշխատանքային գործունէութիւնը կապուել է ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի հետ՝ իսկզբանէ գիտական հետազօտութիւնների առարկայ ունենալով հայ Սփիւռքը: Նրա առաջին մանրամասն գիտական ուսումնասիրութիւնը նուիրուած էր Լիբանանի հայ համայնքի



դպրոցներին: Սարգսեանը հաւաքել, մշակել եւ համակարգել էր ինքնատիպ եւ մեծաքանակ փաստական նիւթ, որը դարձաւ 1991ին յաջողութեամբ պաշտպանած նրա «Լիբանանի Հայ Համայնքի Դպրոցները (1920-1980 թթ.)» ատենախօսութեան հիմքը: Նոյն թուականին այն հրատարակուեց առանձին գրքով:

Լինելով դիւանագէտի կին եւ ուղեկցելով ամուսնուն գործողումների ժամանակ՝ նա չէր կարողանում լիարժէք իրականացնել իր հետազոտական ծրագրերը, սակայն իւրաքանչիւր երկիր, որտեղ որ գտնուում էր, դառնում էր նրա նոր եւ հետաքրքրական գիտական հետազոտութիւնների առարկան: Ապրելով Մոսկուայում, Ալմաթիւում, Թբիլիսիում եւ Վարշաւայում՝ նա անխոնջ հաւաքում էր նիւթեր տեղի հայ համայնքների վերաբերեալ: Նա յօդուածաշար է հրատարակել Դազախաստանի եւ Վրաստանի հայ համայնքների դպրոցների, բարեգործութեան, ազգային հանրային կազմակերպութիւնների վերաբերեալ: Նրա «Հայերը Միջին Ասիայում» յօդուածն ընդգրկուել է Պատմութեան Ինստիտուտի հրատարակած Հայ Ժողովրդի Պատմութիւն բազմահատորեակում:

Կեանքի վերջին տարիներին Ռուգան Սարգսեանը գրեց *Բարեգործութիւնը Թիֆլիսում* ռուսերէն մենագրութիւնը՝ կենտրոնանալով հայ բարեգործական միութիւնների եւ անհատ բարերարների վրայ (առայժմ՝ անտիպ): Կեանքով եւ եռանդով լի, կենսասէր, մարդասէր, ջերմ Ռուգան Սարգսեանը անսպասելիօրէն կեանքից հեռացաւ 12 Հոկտեմբեր 2014ին, Երեւանում:

ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի
Հայ Գաղթավայրերի եւ Սփիւռքի Բաժին

ՖԵԼԻՔՍ ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՈՎ
(1939-2014)

Հնագէտ Ֆելիքս Իւանի Տեր-Մարտիրոսովը ծնուել է 28 Յուլիս 1939ին, Թբիլիսիում, հայաշատ Սովյակ թաղամասում, որտեղ էլ յաճախել է միջնակարգ ռուսական դպրոց: Դպրոցական տարիներին ծանօթանում է վրացի հնագէտ Ի. Ա. Գգելիշվիլու հետ եւ ամառային արձակուրդներին մասնակցում նրա ղեկավարած պեղումներին, որոնք էլ պատանու մէջ մեծ հետաքրքրութիւն են առաջացնում դէպի հնագիտութիւնը:



1961ին ընդունում է Մոսկուայի Միխայիլ Լոմոնոսովի Անուան Պետական Համալսարանի Պատմության Բաժինը եւ 1966ին գերազանց ասարտում հնագիտության բաժինը: Այդ տարիներին նա եռանդուն մասնակցում է հնագիտական պեղումների: Նրա դիպլոմային աշխատանքը եղել է «Գառնիի Հեթանոսական Տաճարը»:

Ուսանողական տարիներին նա գալիս է Հայաստան՝ մասնակցելու Բորիս Պիոտրովսկու ղեկավարած Կարմիր Բլուրի՝ ուրարտական Թէշբեայինի Ամրոցի պեղումներին: Մասնակցելով այդ յուշարձանի՝ պեղումներին եւ ծանօթանալով հայրենիքի հարուստ պատմությանը՝ երիտասարդ հնագետը որոշում է իր յետագայ մասնագիտական գործունեությունը շարունակել Հայաստանում:

Համալսարանն ասարտելուց անմիջապէս յետոյ նա տեղափոխում է Հայաստան եւ աշխատանքի անցնում ՀԽՍՀ ԳԱ Հնագիտության եւ Ազգագրության Ինստիտուտում որպէս կրտսեր գիտաշխատող (1985ից աւագ, իսկ 1995ից՝ առաջատար գիտաշխատող): 1966-1970՝ հնարարութիւն է ունենում մասնակցելու Գառնիի հնագիտական արշաւախմբի պեղումներին՝ ակադեմիկոս Բաբկէն Առաքելեանի ղեկավարութեամբ, իսկ 1970-75՝ Ալեքսանդր Սահինեանի կողմից իրականացնող Գառնիի Տաճարի վերականգման աշխատանքներին: Այս տարիների հնագիտական պեղումները եւ Գառնիի Տաճարի ճարտարապետական եւ աղբիւրագիտական յետագայ ուսումնասիրությունները հիմք հանդիսացան նրա՝ 1995ին լոյս ընծայած *Գառնիի Ամրոցի Տաճարը՝ Հերէն, Վկայարան մենագրութեան* համար: Շուտով լոյս տեսան նրա միա երկու արժէքատու մենագրությունները՝ *Հայոց Թագաւորութեան Կազմաւորումը Պալմական Տուեայների եւ Պալմական Յիշողութեան Համալսարանում* (1995) եւ *Արցունք եւ Հայկական Դիցաբանութեան Միւս Կերպարները* (1996) աշխատանքները: Նա հրատարակել է նաեւ շուրջ 100 գիտական յօդուած:

1970ականներին նա եռանդուն մասնակցութիւն է ունեցել նաեւ Արմաիրի եւ Արտաշատի, Ներքին Սասնաշէնի, Դիտակի, Տաճարաբակի հնագիտական արշաւախմբերին: 1977ին Գ. Կարախանեանի հետ համատեղ սկսել է Ախուրեանի ջրամբարի տարածքում գտնուող անտիկ Շիրակաւանի պեղումները (1982-1984՝ որպէս ղեկավար), որոնք մեծ կարեւորութիւն ունէին ինչպէս Հայաստանի անտիկ շրջանի մշակոյթի ուսումնասիրութեան, այնպէս էլ Շիրակաւանի յուշարձանի ու նրա նիւթական արժէքների փրկութեան համար, որոնք վտանգուած էին ջրամբարի շինարարութեան պատճառով: 1984ին նա պաշտպանում է թեկնածուական

ատենախօսությունը՝ «Հելլենիստական Հայաստանի Խեցեղէնը Որպէս Պատմական Աղբիւր»:

1985-1986՝ ղեկավարում է Երուանդաշատի հնագիտական-հետախուզական արշաւախումբը: Այդ տարիներին նրան յաջողում է միջանի խուզահորերի, մասնակի պեղումների եւ վերգետնեայ նիւթի ուսումնասիրութեան շնորհիւ ճշգրտումներ մտցնել Մովսէս Խորենացու հաղորդած տեղեկութիւնների Ք.ա. Գ. դարում Երուանդ թագաւորի կենտրոնների տեղադրութեան հարցում, ինչպէս նաեւ հետազօտել Երուանդաշատից հիւսիս գտնուող Բագարան եւ Մրէն քաղաքների շրջակայ տարածքների՝ Ախուրեանի ծախ ափին տեղակայուած մի շարք դժուարամատչելի յուշարձաններ:

1985ին նա պեղումներ եւ ուսումնասիրութիւններ է կատարում վաղմիջնադարեան Երեւոյքի Բագիլիկի տարածքում՝ ճշտելու համար այստեղ անելի վաղ յուշարձանների առկայութիւնը: Այստեղ նա բացայայտել է երկու գետնափոր վաղ քրիստոնէական հաւաքատեղի, որոնք թուագրում են Բ.-Գ. դարերով: 1988-1989ին հնագէտը ղեկավարում է Անուշաան Գիւղի տարածքում գտնուող անտիկ բնակատեղիի պեղումները:

ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան Ինստիտուտի Նորակառոյցների Հնագիտութեան Բաժնի լուծարումից յետոյ՝ 1998ին Տէր-Մարտիրոսովը նշանակում է նոյն աշխատանքներն իրականացնող հնագիտական խմբի ղեկավար, որը պէտք է հետեւէր ՀՀ շինարարական եւ այլ բնոյթի աշխատանքների ընթացքում հնագիտական յուշարձանների փաստագրմանը, ուսումնասիրմանն ու պահպանմանը:

Տէր-Մարտիրոսովը Հայաստանի առաջին միջազգային հնագիտական արշաւախմբերի կազմակերպիչներից եւ ղեկավարներից էր: 1989ից նրա գլխատրութեամբ գործում է Բենիամին Գիւղի մօտ գտնուող անտիկ դաստակերտի հնագիտական արշաւախումբը, որը 1999-2006՝ գործել է որպէս համատեղ հայ-ֆրանսիական արշաւախումբ: Կազմում ընդգրկուած հնագէտների մի մասը շարունակեցին իրենց ուսումնասիրութիւնները Էրեբունիի հայ-ֆրանսիական արշաւախմբի կազմում, որը 1998-2007՝ ղեկավարում էր Ֆելիքս Տէր-Մարտիրոսովը:

Նա գործակցել է եւրոպական մի շարք մշակութային կառոյցների եւ համալսարանների հետ. 1994-2001՝ փորձագիտական շրջան է անցել Փարիզի, Նանտի, Լիոնի, Ռէնի յուշարձանների պահպանութեան վարչութիւններում, 1999ին դասախօսութիւններ կարդացել Սորբոնի Համալսարանում, 1999-2001՝ եղել է INTASի (նախկին ԽՍՀՄի, այժմ Անկախ Պետութիւնների Գիտնականների Հետ Համագործակցութեան Աջակցման Միջազգային Կազմակերպութիւն) Հայաստանի պատմական յուշարձանների աշխարհագրական տուեալների համակարգչային

ծրագրի համադեկավար: 2000-2001՝ եղել է «Էրեբունիի Յուշարձան-Թանգարանը եւ Ուրարտուի, Հին Հայաստանի Մշակոյթն Ու Արուեստը» գիտակրթական ծրագրի հեղինակ եւ կազմակերպիչ, իսկ 2001-2002՝ մասնակցել ԻՒՆԵՍԿՕի «Հայ Արուեստի Վիրտուալ Թանգարան» նախագծին: 2005ից հանդիսացել է Եւրոպայի Խորհրդի Հայաստանի մշակութային հարցերով փորձագետ: 2013ին մասնակցել է WMFի (Յուշարձանների Միջազգային Ֆոնդ) «Անին Կոնտեքստում» սեմինարին որպէս հնագիտական հարցերով փորձագետ:

Տէր-Մարտիրոսովի ղեկավարած վերջին հնագիտական ուսումնասիրութիւնը եղաւ Երուանդաշատի արշաւախումբը, որի պեղումները իրականացուցին 2005-2014ին: Դրանց արդիւնքում բացուեցին Ք.ա. Գ. դարի Երուանդ թագաւորի կառուցած որսորդական պալատը եւ նրան յետագայում կցուած կառոյցները, այդ թւում Արտաշէս Ա.ի Ք.ա. Բ. դարի վերաշինութիւնները, երբ Երուանդի պալատը վերածում է ամրոցի:

Գիտնականը մեծ աւանդ ունի նաեւ երիտասարդ սերնդի մասնագիտական կրթութեան եւ ապագայ հնագէտների պատրաստման գործում: Դասախօսական գործունէութիւնը նա սկսել է 1983ին Երեւանի Գեղարուեստի Ինստիտուտում (այժմ՝ Երեւանի Գեղարուեստի Պետական Ակադեմիա) եւ արժանացել պատուաւոր պրոֆեսորի կոչման՝ դասաւանդելով մինչեւ 2006ը: ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտետի Հայ Արուեստի Պատմութեան եւ Տեսութեան ԻՒՆԵՍԿՕի Ամբիոնի բացումից յետոյ (1997), նա եղել է ամբիոնի առաջատար դասախօսներից, աշխատել դոցենտի պաշտօնում եւ արժանացել շնորհակալագրերի: ԵՊՀ Հայ Արուեստի եւ Հնագիտութեան Ու Ազգագրութեան ամբիոններում նա դասաւանդեց մինչեւ 2013-2014 ուսումնական տարին:

Հնագէտի գիտական հետաքրքրութիւնների շրջանակը բաւականին լայն էր: Զբաղուելով հիմնականում Հին Հայաստանի ուրարտական, աքեմէնեան եւ անտիկ շրջանների պատմութեամբ եւ գործնական հնագիտութեամբ՝ նա յաճախ է անդրադարձել հայ արուեստի որոշ խնդիրների եւ ունի մի շարք արուեստաբանական յօդուածներ, ինչպէս նաեւ ուշագրաւ ուսումնասիրութիւններ վաղքրիստոնէական մշակոյթի վերաբերեալ:

Ֆելիքս Տէր-Մարտիրոսովը մահացաւ 27 Հոկտեմբեր 2014ին, Մոսկուայում: Թաղուած է Մոսկուայում:

ԼԻԼԻԹ ՄԻԲԱՅԷԼԵԱՆ
mikalil@mail.ru

ԼԱԻՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂԵԱՆ
(1937-2014)

Պատմաբան Լաւրենտի Աշոտի Բարսեղեանը ծնունդ է 6 Յունուար 1937ին, Երեւանում: 1959ին աւարտել է ԵՊՀ: 1968-1972՝ ղեկավարել է Էրեբունի Ամրոցի, Գառնիի Տաճարի, Յովհաննէս Թումանեանի տուն-թանգարանի (Դսեղ) վերականգնման աշխատանքները: 1973-1978՝ եղել է ՀԽՍՀ Մշակոյթի Նախարարութեան Մշակութայնատրչական Հիմնարկների վարչութեան պետ, 1978-1985՝ Հայաստանի Ազգագրութեան Թանգարանի տնօրէն, իսկ 1984-1985՝ միաժամանակ՝ Հայաստանի Պատմութեան Թանգարանի տնօրէն: Աւելի ետք՝ Ծիծեռնակաբերդի Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի տնօրէն: 1988-1991՝ Բարսեղեանը ՀԽՍՀ Նախարարների Խորհրդին Աղընթեր Պատմութեան եւ Մշակոյթի Յուշարձանների Պահպանութեան եւ Օգտագործման Գլխաւոր Վարչութեան պետն էր, իսկ 1992-1995՝ ՀՀ ԳԱԱ փոխնախագահը:

1998ին արժանացել է պատմական գիտութիւնների դրկտորի գիտական աստիճանի: Եղել է Ազգային Անվտանգութեան Հիմնախնդիրների Միջազգային ԳԱ նախագահութեան անդամ (1998ից), Ազգային Անվտանգութեան Հիմնախնդիրների Համահայկական Ակադեմիա հասարակական կազմակերպութեան նախագահ (2003ից):

Բարսեղեանի աշխատութիւնները վերաբերում են հայ ժողովրդի ծագման ու կազմաւորման հարցերին եւ Հայոց Յեղասպանութեանը:

Առանձին հատորներով լոյս են տեսել Բարսեղեանի *Հայ Ժողովրդի Ծագման եւ Կազմաւորման Պրոբլէմը Հայագիտութեան Մէջ* (1974), *Պալմադրական Վկայութիւնները Հայկական Լեռնաշխարհի Երկրաշարժերի Մասին* (1995), *Հայ Ժողովրդի Ծագման եւ Կազմաւորման Հարցերը Պալմադրութեան Մէջ* (1996), *Ամերիկայի Միացեալ Նահանգները, Հայոց Յեղասպանութեան Դատաւարումը եւ Թուրքական Հակազդեցութիւնը* (2001), *Հայոց Յեղասպանութեան Հրապարակայնօրէն Դատաւարումն եւ Ճանաչման Ժամանակագրութիւնը (1915-2000 թթ.)* (2001) աշխատութիւնները:

Արժանացել է Ֆրիտիոֆ Նանսէն Միջազգային Հիմնադրամի ոսկէ յուշամեդալին (2002) եւ ՀՀ Մովսէս Խորենացու մեդալին (2003):

Լաւրենտի Բարսեղեանն իր մահկանացուն կնքեց 6 Դեկտեմբեր 2014ին, Երեւանում:

ՆՈՆԱ ՍՏԵՓԱՆԵԱՆ
(1932-2014)

Հայ արուեստի ճանաչումը գիտակ Նոնա Սուրենի Ստեփանեանը ծնունդ է 1932ին, Բաքուում: Հայրը՝ Սուրեն Լեւոնի Ստեփանեանը (1895-1971) քանդակագործ էր, Հայաստանի ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր, մայրը՝ Անաիդա Շէկ-Օսիպեանը (1895-1981), գրադարանի աշխատող:

Նոնա Ստեփանեանը 1949ին ոսկե մեդալով աաարտել է Երեւանի Պուշկինի Անուան Միջնակարգ Դպրոցը: 1954ին աաարտել է Մոսկուայի Համալսարանի Պատմական Բաժանմունքի Արուեստաբանական Բաժինը, ապա՝ Հայաստանի ԳԱ Արուեստի Ինստիտուտի ասպիրանտուրան: 1962ին նրան շնորհուել է արուեստագիտության թեկնածուի գիտական աստիճան՝ «Ազգայինը Հայկական Գեղանկարում» աշխատության համար: 1987ին պաշտպանել է դոկտորական ատենախօսություն: 1989-2004՝ եղել է Ռուսաստանի Գեղարուեստի Ակադեմիայի Ի. Դարի Հայրենական Նկարչության Բաժնի վարիչ (2004ից՝ գլխավոր գիտաշխատող): 2005ից աշխատել է նոյն Ակադեմիայի Մոնումենտալ Արուեստի Բաժնում:

Գրել է ռուսերեն, չնայած նրա ստորագրությամբ մասնագիտական յօդուածներ են լոյս տեսել նաեւ Երեւանի *Սովետական Արուեստ* ամսագրում, ինչպէս նաեւ *Ինչպէս Դիպել Գծանկարը* գրքովը (1974): Զբաղուել է արուեստի պատմության եւ տեսության հարցերով, ուսումնասիրել մի շարք հայ գեղանկարիչների (Յակոբ Յովնաթանեան, Սերգէ եանգուլով, Յակոբ Կոջոյեան, Ալեքսանդր Բաժբէուկ-Մելիքեան, Գէորգ Գրիգորեան, Ռոբերտ Էլիբէկեան) ստեղծագործությունը: Հայ արուեստին են նուիրում նրա՝ առանձին հատորներով հրատարակումը ռուսերեն աշխատությունները: - *Հայկական ԽՍՀի Արուեստը* (1967), *Միջնադարեան Հայաստանի Դեկորատիւ Արուեստը* (1971, ռուսերեն եւ ֆրանսերեն, ֆրանսերենի մի տարբերակը վերահրատարկուել է 1995ին, Մարսէլում), *Խորհրդային Հայաստանի Ճարտարապետական Յուշարձանները* (1971, ռուսերեն եւ անգլերեն, համահեղինակ՝ Ստեփան Մնացականեան, վերահրատ.) 1978ին, ռուսերեն, անգլերեն եւ ֆրանսերեն), *Սերգէ Պալուվիչ եանգուլով* (1977), *Երեւան, Գառնի-Գեղարդ, Էջմիածին, Աշտարակ* (1985, համահեղինակ՝ Ա. Գ. Գրիգորեան), *Հայաստանի Կերպարուեստի Ակնարկ* (1985, ռուսերեն եւ անգլերեն), *Գրիգոր Խանջեան. Նկարչություն, Գծանկար* (1987, համահեղինակ՝ Բորիս Զուրաբով), ինչպէս եւ հայ արուեստին նուիրում յօդուածներ՝ տարբեր ռուսալեզու ժողովածուներում եւ արուեստի պատմության գրքերում:

1981ին Բեռլինի Union Verlag հրատարակչությունը լոյս է ընծայել Նրա, Բուրհարդ Բրենտշի եւ Ստեփան Մնացականեանի *Kunst des Mittelalters in Armenien* (Միջնադարեան արուեստը Հայաստանում) աշխատությունը, որ յետագայում վերահրատարկուել է Վիեննա-Մինխեռնում: Իսկ 1984ին Պետերբուրգի Արորա եւ Լոնդոնի Փենզուեյն հրատարակատների հետ համատեղ անգլերէն, ֆրանսերէն եւ գերմաներէն առանձին հատորներով հրատարակել է *Գորգեր եւ Կարպէտներ Կովկասից* գիրքը (համահեղինակներ՝ Լաթիֆ Քերիմով, Տատիանա Գրիգորիա, Դալիդ Ցիցիշվիլի):

Մոսկուայում 1989ին լոյս է ընծայուել Նրա *Հայաստանի Արուեստը. Պարմագեղարուեստական Չարգացման Գծերը* պատկերազարդ մեծադիր հատորը՝ հնագոյն ժամանակներից մինչեւ 1980 հայ արուեստի տարբեր դրսեւորումները (մանրանկար, կիրառական արուեստ, հաստոցային նկարչություն, քանդակագործություն) ներկայացնող:

Հեղինակ է նաեւ եւրոպական, ռուսական եւ խորհրդային կերպարուեստի մասին տարբեր հետազոտությունների:

Կերպարուեստի խնդիրների եւ արդի վիճակի մասին զեկուցումներով հանդէս է եկել մի շարք գիտաժողովներում: Կազմել եւ խմբագրել է ուսումնական ծեռնարկներ: Եղել է Ռուսաստանի Թանգարանների Գիտական Խորհրդի անդամ:

Նոնա Սուրէնի Ստեփանեանը մահացաւ 8 Դեկտեմբերի 2014ին, Մոսկուայում:

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com

ԺԱՆԷՏ ԱՂԱՐԵԱՆ
(1940-2014)

Իրանահայ մշակութաբան, լրագրող Ժանէտ Տիգրանուհի Լազարեան Շաղրոդին ծնուել է 1940ին, Թեհրանում, Նախիջեանից գաղթած ընտանիքում: Տարրական ու միջնակարգ կրթություն ստացել է Սպահանում ու Թեհրանում, բարձրագոյնը՝ Լոնդոնի Արքայական Քոլէջում, որտեղ մասնագիտացել է համաշխարհային արուեստի պատմության մէջ: Նրա առաջին յօդածները լոյս են տեսել 1967ին՝ պարսկական *Ֆերդոսի* ամսագրում՝ գեղանկարչութեան, երաժշտութեան ու կինոյի մասին: Յետագայում աշխատանքի է անցել անգլիացեւո *Tehran Journal* օրաթերթում որպէս արուեստի բաժնի վարիչ: Լայնօրէն լուսաբանել է (նաեւ իրանեան հեռուստատեսութեամբ) ժամանակակից երաժշտական եւրոպական փառատօները՝ ոչ մի առիթ բաց չթողնելով անդրադառնալու նաեւ հայկական արուեստին: Նրա

միջնորդութեամբ է ծագումով հայ լեհ մեծ երաժիշտ Քրիշտոֆ Պենդերեցկին 300 հոգանոց նուագախմբով ժամանել Իրան եւ հանդէս եկել համերգային ծրագրով: Տարբեր կինօփառատներում Լազարեանը բողոքի ձայն է բարձրացրել ի գորակցութիւն Սերգէյ Փարաշանովի, երբ վերջինս գտնուում էր արգելափակման մէջ: Որպէս լրագրող մասնակցել է պարսկական եւ միջազգային կինօփառատներին:

Իրանի իսլամական յեղափոխութիւնից յետոյ Լազարեանը որպէս ազատ լրագրող աշխատակցել է պարսկալեզու *Դոնիա Սոխան*, *Բոխարա*, *Թաուս* ամսագրերին եւ *Tehran Times*, *Iran News* անգլերէն օրաթերթերին: Լրագրական գործունեութեան ընթացքում նա հարցազրոյցներ է վարել Ուլիլիմ Սարոյեանի, Քեթի Բերբերեանի, Արամ Խաչատրեանի, Աննօ Բաբաջանեանի, Հերբերտ Ֆոն Կարայեանի, Ջուլիէ Մեիթայի, Փիթըր Բրուքի հետ:

2001ին, քաղաքակրթութիւնների երկխօսութեան տարուայ շրջանակներում Թեհրանի ժամանակակից Արուեստների Թանգարանում կազմակերպել է հայաստանցի եւ իրանահայ ժամանակակից նկարիչների գործերի մեծ ցուցահանդէս, իսկ 2004ին Հայաստանի Ազգային Թանգարանում՝ Իրանի 3 սերնդի նկարիչների գործերի ցուցահանդէս: 2008ին Թեհրանում բացել է Լազար պատկերասրահը, որի տնօրէնն էր մինչեւ իր մահը:

Երաւամեամայրու գործը, սակայն, 2012ին Երեւանում պարսկերէնից թարգմանաբար լոյս տեսած *Իրանահայոց Հանրագիտարանն* է (թարգմանիչ՝ Ժորժ Աբրահամեան), որի 462 էջերում իմի են բերուած անուանի իրանահայերի կենսագրականներ, լուսանկարներ, այլեւայլ տեղեկութիւններ:

Ժանէտ Լազարեանը մահացել է 2014ին, Թեհրանում:

ՄԱՆՈՒԷԼ ՍԱՐԳԻՍԵԱՆՏ (1923-2015)

Պատմաբան, քաղաքագէտ, ընկերաբան, Հայդեբերգի Համալսարանի պատուաւոր ուսուցչապետ Մանուէլ (Էմանուէլ) Սարգիսեանը թէեւ հայագէտ չէր, սակայն գրել է նաեւ Հայաստանի պատմութեանն առնչուող մէկ աշխատութիւն:

Ծնունդ է 1923ին, Բաքուում, վեց տարեկանից ընտանիքով քնակուել է Թեհրանում: Ուսանել է Թեհրանի Համալսարանում: 1946–1956՝ քնակուել է ԱՄՆում, ուսումը շարունակել Նիւ Եորքի Իրանական Հաստատութիւնում: 1952ին



դոկտորական աստիճան է ստացել Շիրազոյի Համալսարանում: Չկարողանալով ԱՄՆում հրատարակել իր առաջին գիրքը՝ *Ռուսաստանը եւ Արեւելքի Մետականությունը* (ռուսերէն թարգմանությունը լոյս է տեսել 2005ին, Սանկտ Պետերբուրգում), այն տպագրել է 1956ին, Թիփինգէնում, գերմաներէն, որի պատճառով նրան արտաքսել են ԱՄՆից: Հաստատուելով Գերմանիայում՝ Սարգիսեանցը 1956-1962՝ աշխատել է Քիլի եւ Ֆրայբուրգի Համալսարաններում, 1962-1967՝ եղել է Բանզասի Համալսարանի հիւր դասախօս, 1967ից՝ Հայդելբերգի Համալսարանի քաղաքագիտութեան հաստատութեան ուսուցչապետ:

Չնայած փայլուն կրթութեանը եւ տարբեր լեզուներ տիրապետելուն՝ Սարգիսեանցի գիտական կեանքն այնքան էլ յաջող չի եղել. նրան մշտապէս հետաքրքրել են թեմաներ, որոնք տարբեր պատճառներով տաբու են եղել արեւմտեան գիտական շրջանակների համար: Սարգիսեանցի գիտական հետաքրքրությունները ներառել են Ռուսաստանի, Հարաւ-Արեւելեան Ասիայի, Լատինական Ամերիկայի ընկերվարութեան կրօնական ակունքները: Լ. Ամերիկայի, Բիրմայի, Ֆիլիպինների, Ինդոնեզիայի, Հայաստանի, Ռուսաստանի պատմութեան վերաբերեալ նրա գրքերը լոյս են տեսել գերմաներէն, անգլերէն եւ իսպաներէն:

Նրա ամենայայտնի գործերից է *Ադուլֆ Հիտլերի Բրիտանական Մոդէլները* գերմաներէն աշխատությունը (1997): Այն արգելուել է Միացեալ Թագաւորութիւնում (անգլերէն թարգմանությունը լոյս է տեսել Իռլանդիայում եւ Հնդկաստանում՝ *Կայսերապաշտութիւնից Դէպի Ֆաշիզմ. Ինչո՞ւ Հիտլերի «Հնդկաստանը» Պէտք է Դառնար Ռուսաստանը* վերնագրով): Գերմանիայում երկու անգամ հեղինակի դէմ քրեական գործ է յարուցուել: 2003ին Սանկտ Պետերբուրգում լոյս է տեսել աշխատութեան ռուսերէն թարգմանությունը՝ *Գերմանական Ֆաշիզմի Անգլիական Արմատները* վերտառութեամբ:

1975ին Նագիւորի (Հնդկաստան) Udyama Commercial Press հրատարակչութիւնն անգլերէնով լոյս է ընծայել Սարգիսեանցի *A Modern History of Transcaucasian Armenia: Social, Cultural, and Political* աշխատությունը: Հեղինակ է նաեւ Ռուսաստանի արեւելեան ժողովուրդների, Հարաւային Ասիայի, Բիրմայի պատմութեան նուիրում գրքերի: Նրա *Ֆելիպէ Կարիօի, Մայաների Կարմիր Առաքեալը* գերմաներէն աշխատությունը (1991, Հայդելբերգ) թարգմանուել է մայա հնդկացիների լեզուով:

Տեղափոխուելով Մեքսիկա՝ Սարգիսեանցը հաստատուել է Մերիդա քաղաքում: Ընտրուել է Եուկատանի (Մեքսիկա) Համալսարանի Գիտությունների Ակադեմիայի անդամ:

Մահուել Սարգիսեանցը մահացել է 12 Մարտ 2015ին:

ԱՐԾՈՒԻ ԲԱԽԶԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com



ՇՈՒՀԱՆԻԿ ԱՓՈՅԵԱՆ
(1923-2015)

Յիրափ, անգնահատելի է երաժշտագետ, դաշնակահար, արուեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Շուշանիկ Ափոյեանի ներդրումը հայ կատարողական արուեստի պատմության կերտման գործում: Կանգնած լինելով հայ երաժշտագիտության ակունքներում՝ Ափոյեանն, իրապես, իր ողջ կեանքը նուիրաբերեց հայրենական դաշնամուրային արուեստի ստեղծման և զարգացման պատմության հետազոտմանը, սերունդներին թողնելով հիմնարար և բազմաթուփանդակ աշխատություններ դաշնամուրային արուեստի պատմության յետագայ ուսումնասիրությունների համար: Հայ դաշնամուրային արուեստի բնագաւառում այսօր հազիւ թէ գտնուի մի որեւէ աշխատություն, որի համար որպէս սկզբնաղբիւր եւ հիմք ծառայած չլինեն Ափոյեանի ուսումնասիրությունները:

Ծնուել է 17 Հոկտեմբերի 1923ին, Երեւանում: 1947-1948՝ աւարտել է Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիան երկու մասնագիտություններով՝ դաշնամուրային եւ պատմատեսական: 1950ին աւարտելով ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի ասպիրանտուրան (ղեկավար՝ ղոկտոր, պրոֆեսոր Գէորգի Տիգրանով), 1953-1955՝ փորձառութիւն է անցել Լենինգրադում (այժմ Սանկտ-Պետերբուրգ) ականաւոր մանկավարժ եւ դաշնակահար, պրոֆեսոր Լեւ Արոնովիչ Բարենբաումի ղեկավարութեամբ:

Տարբեր տարիներ դասաւանդել է դաշնամուր Երեւանի Չայկովսկու Անուան Երաժշտական Մասնագիտական (1947-1953 եւ 1955-1980) եւ Լենինգրադի Ռիմսկի-Կորսակովի Անուան Երաժշտական դպրոցներում (1953-1955), Երեւանի Ռոմանոս Մելիքեանի Անուան Երաժշտական Ուսումնարանում դասաւանդել է դաշնամուրի դասաւանդման մեթոդիկա (1955-1962), 1957ին Երեւանի Պետական Կոնսերվատորիայում (ԵՊԿ) դասաւանդել է դաշնամուրային արուեստի պատմութիւն եւ տեսութիւն, 1962ին դասաւանդել է դաշնամուրի դասաւանդման մեթոդիկա: 1980-1990՝ վարել է ԵՊԿ Պատմության եւ Տեսութեան Ամբիոնի Կատարողական Արուեստի եւ Մանկավարժութեան Ամբիոնի վարիչի պաշտօնը: Մինչեւ 2013 հանդիսանում էր ԵՊԿ պրոֆեսոր-խորհրդատու:

Հետազոտությունների ոլորտներն են հանդիսացել հայ յօրինողի դաշնամուրային արուեստը, կատարողական արուեստը, դաշնամուրային մանկավարժութիւնը եւ ուսուցման մեթոդիկան,

երաժշտական կրթությունը եւ դաստիարակությունը: Հեղինակ է 100ից անելի յօդաածների, ակնարկների, մեթոդական ուղեցույցների, մենագրությունների: Կազմել եւ հրատարակել է նաեւ դաշնամուրային ստեղծագործությունների տարբեր ժողովածուներ:

Նրա յօդաածներն ու ակնարկները տպագրուել են *Literaturnaya Armenia* (Գրական Հայաստան), *Երաժշտական Հայաստան*, *Muzikalnaya Akademia* (Երաժշտական ակադեմիա), *Սովետական Արուեստ*, *Sovetskaya Muzika* (Սովետական երաժշտություն) եւ այլ գիտական պարբերականներում, տեղական եւ արտասահմանեան մամուլում, ուսումնական ձեռնարկներում, քրեստոմատիաներում:

Հրատարակուած մենագրությունները, ակնարկներն ու ժողովածուների ցանկը ներառում է՝ *Սովետական Հայաստանի Դաշնամուրային Երաժշտությունը* (1968, ռուսերէն), *Ռոբերտ Քրիստափորի Անդրէասեան* (1984, ռուսերէն), *Անդրէասեանը՝ Դաշնակահար եւ Մանկավարժ* (1999), *Հայկական Դաշնամուրային Արուեստի Պատմությունը (1850-1920 թթ.)* (դասագիրք, 2006) *Ակնարկներ Հայ Դաշնակահարների Մասին* (2008, ռուսերէն), *XX Դարի Դաշնամուրի Մանկավարժութեան եւ Կապարողական Արուեստի Պատմությունից* (քրիստոմատիա, համահեղինակ՝ Ի. Լ. Չոլտովա, 1998, ռուսերէն), *Կամերային-Գործիքային Սպեղծագործություն. Ակնարկ (Դաշնամուրային Երաժշտութեան Բաժին)* (1960, ռուսերէն), *Հայկական Կամերային-Գործիքային Սպեղծագործություն (Դաշնամուրային Երաժշտութեան Բաժին)* (2րդ լրացուցիչ հրատ., հայերէն), *Խորհրդային Հայաստանի Երաժշտությունը. Ժողովածու* (1973, ռուսերէն), *Հայաստանի յօրինողների Մանկական Պիեսները. Ժողովածու* (կազմուել եւ խմբագրուել է Է. Աբաջեանի հետ համատեղ, 1972, ռուսերէն), *Հայ յօրինողների Դաշնամուրային Պիեսները. Ժողովածու* (Երաժշտական Ուսումնարանների Համար) (կազմուել եւ խմբագրուել է Է. Աբաջեանի հետ համատեղ, 1969), *Հայ Կոմպոզիտորների Դաշնամուրային Սպեղծագործությունների Նուագացանկը (Ձեռնարկ Միջին Մասնագիտական Երաժշտական Դպրոցների Համար)* (Շ. Օ. Բաբայեանի հետ համատեղ, 1983), *Հայ Կոմպոզիտորների Դաշնամուրային Սպեղծագործությունների Նուագացանկը (Ձեռնարկ Երաժշտական Ուսումնարանների եւ Երաժշտանոցի Համար)* (Շ. Օ. Բաբայեանի հետ համատեղ, 1983, ռուսերէն), *Հայկական Կամերային-Գործիքային Երաժշտություն. (20-50 թթ., Դաշնամուրային Երաժշտութեան Բաժին)* (3րդ հրատ.), *Հայկական ՍՍՀ Երաժշտական Մշակույթ. Ժողովածու* (1985, ռուսերէն), *Իզումնովը եւ Հայաստանը. Ակնարկ, Երաժշտական Լուսաւորչություն* (1999, ռուսերէն):

1962ին ստացել է արուեստագիտության թեկնածուի, 1970ին՝ դոցենտի, իսկ 1987ին՝ ԵՊԿ պրոֆեսորի գիտական աստիճան: 2011ին Հայաստանի Հանրապետության անկախության 20ամեակի առիթով պարգևատրուել է Մովսես Խորենացու շքանշանով:

Մահացել է 9 Հոկտեմբեր 2015 թուականին, Երեւանում:

ԱՆՆԱ ԱԴԱՄԵԱՆ

ԼԵՆԴՐՈՒՇ ԱԼՈՅԵԱՆ
(1941-2015)

ԵՊՀ պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր Լենդրուշ Արամի Ալոյեանը ծնուել է 1941ին, Վանաձոր (Կիրովական) քաղաքում: 1958ին աւարտել է տեղի թիւ 6 միջնակարգ դպրոցը, 1960-1962ին ծառայել է խորհրդային բանակում, 1962ին ընդունուել ԵՊՀ Բանասիրական ֆակուլտետի ժողնալիստիկայի Բաժինը, որը 1966ին աւարտել է գերազանցութեամբ եւ աշխատանքի անցել *Սովետական Դպրոց* թերթում: 1987ին աշխատանքի է ընդունուել ԵՊՀ ժողնալիստիկայի Բաժնում, այնուհետեւ եղել է ժողնալիստիկայի ֆակուլտետի դասախօս, իսկ 1999-2007՝ Մամուլի Պատմութեան եւ Տեսութեան Ամբիոնի վարիչ:

1974ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1998ին՝ դոկտորական ատենախօսութիւններ, 2000ին ստացել է պրոֆեսորի կոչում: Չնայած մանկավարժական գործունէութեանը, միաժամանակ հեղինակել է մենագրութիւններ, գիտական եւ հրապարակախօսական յօդուածներ: Զբաղում էր ԺԹ. դարի երկրորդ կէսի եւ Ի. դարասկզբի արեւելախայ մամուլի պատմութեան հիմնախնդիրներով: Գիտական հետաքրքրութիւնների առանցքում *Մշակ* լրագրի գործունէութիւնն էր՝ հիմնադիր խմբագիր Գրիգոր Արծրունու մահից յետոյ: *Մշակի* յետարծրունեան շրջանին անդրադարձել է մի շարք ուսումնասիրութիւններում՝ «*Մշակ*» Լրագրի Հրապարակախօսութիւնը 1905-1921 թթ. (2003), Հայ Հասարակական Միտքը «*Մշակ*» Լրագրում (1892-1905 թթ.) (2007), Յետարծրունեան շրջանի «*Մշակի*» Նշանաւոր Հրապարակախօսները (2007), «*Մշակը*» 1893-1913 թթ. (2013):

Առանձնակի կարեւորում էր Ի. դարասկզբի այն հրապարակախօսների գործունէութիւնը, որոնց յօդուածները տպագրուել են *Մշակի* էջերում՝ նկատելի ազդեցութիւն թողնելով հայ հասարակական, քաղաքական եւ մշակութային կեանքի տարբեր ոլորտների վրայ: Նրանցից միջանիսի՝ Համբարձում Առաքելեանի, Ա. Աթանասեանի, Խաչատուր Մալումեանի, Վ. Նալբանդեանի են.

հրապարակախօսական ժառանգությանը նա անդրադարձել է առանձին հետազոտություններում:

Կեանքի վերջին տարիներին աշխատում էր երիտասարդական ափնով ու ոգեւորութեամբ՝ իր տեսադաշտում պահելով Ի. դարասկզբի հայ պարբերականներում անթեղուած ուշագրաւ հրապարակումներն ու նրանց հեղինակներին:

Ալոյեանը կեանքին հրաժեշտ տուեց Երեւանում, 20 Հոկտեմբեր 2015ին:

ԵՊՀ ռեկտորատ, Ժողովուրդների ֆակուլտետ,
Հայաստանի Ժողովուրդների Միութիւն

ԿԱՐԻՆԷ ԽՈՒՂԱԲԱՇԵԱՆ
(1929-2015)

Երաժշտագէտ-տեսաբան, արուեստագիտութեան թեկնածու, Կարինէ Խողաբաշեանը ծնուել է 1929ին, Երեւանում: Սերում է Երեւանի եւ Լոռու Խողաբաշեանների եւ Խանաղեանների՝ հնատոհմ ազնուականներից եւ Նախիջեանի Եղիգարեան վաճառականներից: Հայրը՝ Էմանուէլ Խողաբաշեանը ճանաչուած ճարտարագէտ-շինարար էր, մայրը՝ Ռեզինա Եղիգարեանը, շնորհալի դաշնակահարուհի եւ մանկավարժ:

Խողաբաշեանը գերազանցութեամբ աւարտել է Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայի Տեսական-Կոմպոզիտորական բաժինը, ապա՝ Լենինգրադի (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ) Ն. Ռիմսկի-Կորսակովի Անուան Կոնսերվատորիայի ասպիրանտուրան:



Արդի երաժշտագիտութեան դասականների՝ Գէորգի Տիգրանովի, Քրիստափոր Քուշնարեանի, Եւրի Տիպինի սանուհին եւ յետնորդն էր: Նրա ստեղծագործական անհատականութեան ձեւաւորմանը էապէս նպաստեցին նշանաւոր երաժշտագէտ-բանագէտներ Արամ Քոչարեանը, Վլադիմիր Հոշովսկին, ամուսինը՝ յայտնի պատմաբան-արեւելագէտ Գագիկ Սարգսեանը:

Գիտահետազօտական բազմաթեղուն գործունէութեան հիմնական ոլորտն էր հայ երաժշտութիւնը՝ աւանդական (դասական,

(ժողովրդական, աշուղական), յօրինողական (դասական,

ժամանակակից): Գիտական հետաքրքրությունները բազում եւ բազմապիսի էին, սակայն գերակշռությունը տրուում էր տեսական երաժշտագիտությանը: 1966ին երեւանում լոյս է տեսել նրա *Գրիգոր Եղիազարեան* աշխատությունը: 1970ին ՀՀ ԳԱ Արուեստի Ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախօսություն՝ «Բազմաձայնության Զարգացման Վաղ Փուլը Հայ Երաժշտության Մէջ» թեմայով, որը յետագայում հրատարակել է որպէս առանձին ռուսերէն մենագրություն՝ *Armyanskaya Muzika Na Puti Ot Monodii K Monogolosiyu* (Հայ Երաժշտությունը միաձայնությունից դէպի բազմաձայնություն) վերնագրով (1977): Մենագրությունն առաջին երաժշտատեսական հետազոտությունն է՝ նուիրում հայ յօրինողական դպրոցի վաղ, ազգային յօրինողական երաժշտության յետագայ ընթացքի համար խիստ կարեւոր մինչկոմիտասեան շրջանին:

Երկար տարիներ զբաղուել է երաժշտության ծայնակարգի (լադի) հարցերով: Այսպէս *Կուարտա-Կոինտային Կառոյցները եւ Անգեմիտոնիկան Հայ Ժողովրդական Երգերում* աշխատության մէջ (1977), շարունակելով եւ զարգացնելով Կոմիտասի, Սպիրիդոն Մելիքեանի, Քուշնարեանի արտայայտած գաղափարները, առաջնորդուելով քանահիստությունից քաղուած բազմաթիւ օրինակներով, հիմնաւորում է վերոյիշեալ ծայնակարգերի առանձնայատուկ բնորոշությունը հայկական ժողովրդական երգերի համար: Այնուհետեւ *Հայ Մոնոդիկ Երաժշտության Լադային Հնչինաշարերը եւ Հնչինաշարերի Անդիկ Համակարգը* աշխատության մէջ (1984) ծայնակարգային թեման զարգանում է համեմատական երաժշտագիտության հունով:

Զայնակարգի ուսումնասիրության մեթոդաբանության մէջ արժեքաւոր ներդրում է հանդիսանում Խուդաբաշեանի *Մոդուլների Համակարգը եւ Դրանց Կիրառումը Ժողովրդական Երգի Զայնակարգի Նկարագրութեան Ընթացքում* աշխատութիւնը (գրուած 1978ին, հրատ. 1996): Հայաստանում 1927ից հրապարակուած բոլոր ժողովրդական երգերի (շուրջ 1000 նմուշ) ծայնակարգային վերլուծութեան հիման վրայ, մանրամասն մշակուել եւ համակարգի է բերուել հեղինակի ծայնակարգային հայեցակարգը, «ծայնակարգ», «ծայնակարգային հնչինաշար», «ինտոնացիա» եւ այլ հասկացութիւնների սահմանումից մինչեւ ծայնակարգի քանակային եւ թուային ցուցիչները: Միաժամանակ աշխատութեան մէջ ներկայացուած է հեղինակի կողմից մշակուած մոդուլների՝ պայմանական նշանների թուագրական համակարգը, որի միջոցով նկարագրուում է երգի ծայնակարգը:

Խուդաբաշեանի հետազոտութիւններում կարեւոր տեղ ունի հայ ժողովրդական երգերի երաժշտաբանաստեղծական բնագրերի

վանկաչափական կառուցումը (*Ամանակ, Վանկաչափություն*, 1995, *Հայ Աանդական երգի Տաղաչափական Համակարգի Շուրջ*, 1997): Հայ երաժշտական բանագիտության այս ոլորտը, որը ժամանակին հիմնադրեց Կոմիտասն իր *Հայ Գեղեկական երաժշտություն* հիմնադր աշխատության մեջ (1906), յետագայում համարեա չէր շոշափուել հայ երաժշտագէտ-տեսաբանների կողմից:

Խոդաբաշեանի աշխատություններն այս ասպարէզում խթանեցին հայ երաժշտագէտների հետազօտական հետաքրքրութիւնը նոյն ուղղութեամբ, որ յատուկ նշանակութիւն ունի, մասնատրապէս, հայ ժողովրդական երաժշտութեան դեռեա քիչ լուսաբանուած, բայց եւ խիստ կարեւոր երեւոյթների՝ երգային տիպերի եւ երաժշտական բարբառների ուսումնասիրութեան տեսանկիւնից:

Խոդաբաշեանն անդրադարձել է նաեւ Արեւելքի մասնագիտացուած երաժշտութեան կողողներից մէկին՝ մուղամին, դիտարկելով վերջինիս՝ Հայաստանում տարածուած նմուշները:

Նշուած եւ այլ աշխատութիւններ ժամանակին լոյս են տեսել գիտական տարբեր ժողովածուներում եւ պարբերականներում, աւելի ուշ ամփոփուել են հեղինակի *Armianskaya Muzika V Aspekte Sravnitel'nogo Muzikoznaniya* (Հայ երաժշտութիւնը համեմատական երաժշտագիտութեան տեսանկիւնից) խորագրով ստուարածաւալ գրքում (2011), որը վերջին տարիների հայ երաժշտագիտական մտքի առաւել նշանակալից երեւոյթներից է:

Կեանքի վերջին տարիներին հրատարակութեան նախապատրաստեց, սակայն, չտեսա իր «կարապի երգը»՝ *Երաժշտութեան եւ Երաժիշտների Մասին* խորագրով եա մէկ աշխատութիւն (350 էջ): Այն բովանդակում է հեղինակի նախկինում չհրատարակուած կամ հրատարակութեան ընթացքում կրճատուած, աղաաղուած բազմաբնոյթ յօդածների վերախմբագրուած, ճշտուած եւ ամբողջացուած տարբերակներ:

Խոդաբաշեանի բազմաբովանդակ ստեղծագործական գործունէութեան միա ոլորտն էր երաժշտական հրապարակախօսութիւնը, որն իր սեռի ողջ բազմազանութեամբ կարեւոր եւ ուրոյն տեղ գրաւեց երաժշտագէտի կեանքում: Համերգերի, երաժշտական ներկայացումներին նուիրուած բազմաթիւ գրախօսականների հեղինակ էր: Խոդաբաշեանի մի շարք յօդածներում վերստեղծուել եւ ամբողջացուել են հայ ականաւոր երաժշտական գործիչների ստեղծագործական դիմանկարները (Սաշա Օգանեզաշվիլի, Արամ Քոչարեան, Հայկանուշ Դանիէլեան, Զարա Դոլուխանեան, Գայիանէ Զեքոտարեան, Անտ Տէրտէրեան: Խոդաբաշեանն առաջին երաժշտագէտն էր, որը հանդէս եկաւ յօրինող

Տէրտէրեանի ստեղծագործութեանը նուիրում ծաւալուն վերլուծական յօդուածներով): Երեխաների գեղագիտական դաստիարակութիւնը, հայկական ֆիլիարմոնիայի գործունէութիւնը, ինչպէս նաեւ Հայաստանի երաժշտական կեանքի այլ ոլորտների լուսաբանմանը եւ վերլուծմանը նուիրում ըննադատական յօդուածները հրապարակուել են հանրապետական եւ խորհրդային տարիների համամիութենական մամուլում: Խուդաբաշեանի հրապարակումները աչքի էին ընկնում հարուստ տեղեկատուութեամբ, մտահորիզոնի բացառիկ լայնութեամբ, սուր ըննադատական շնչով: Դրանք անաչառ էին, դիրքնթեռնելի եւ բանականութեան, խորագիտակութեան եւ յուզականութեան ներդաշնակ միասնութեան օրինակ էին ծառայում:

1984ից ըսան տարուց աւելի ղեկավարել է ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի Ժողովրդական Երաժշտութեան բաժինը: Այստեղ լաւագոյնս դրսեւորուեց Խուդաբաշեանի որպէս գիտական գործընթացի հմուտ կազմակերպչի տաղանդը, շրջապատը ստեղծագործական եռանդով լիցքատրելու, ազգային երաժշտական մշակոյթի զարգացմանը առաւել նպաստող գիտական ծրագրեր մշակելու նրա կարողութիւնը: Կայացել են ժողովրդական երաժշտութեան հաւաքագրման նպատակով շուրջ 50 գիտարշմաներ Հայաստանի տարբեր շրջաններում եւ Հայաստանից դուրս: Ձայնագրուել են երկու հազարից աւելի ժողովրդական երգեր եւ նուագներ: Համակարգուել է (ցանկագրուել, քարտատրուել, անձնագրուել) բաժնի գլխատր օղակում՝ Արամ Քոչարեանի անուան ձայնադարանում ամբարում ժողովրդական երաժշտութեան հսկայածաւալ նիւթը (20 հազարից աւելի միատր):

Հայաստանի մշակութային կեանքի վերջին տարիների կարետր իրադարձութիւններից էր Հայ Աանդական Երաժշտութիւն բազմահատոր մատենաշարի ստեղծումը, որի հիմնադիրը եւ գլխատր խմբագիրն էր:

Հայաստանի Հանրապետութեան Արուեստի Վաստակատր Գործիչ, հրապարակախօս, ըննադատ, ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի բազմամեայ գիտաշխատող, նոյն ինստիտուտի 1984-2005՝ Ժողովրդական Երաժշտութեան բաժնի վարիչ, գիտութեան եռանդուն կազմակերպիչ, Հայաստանի Կոմպոզիտորների եւ Երաժշտագէտների Միութեան եւ ԵՆԻՆԵՄԿՕԻն կից Աանդական Երաժշտութեան Միջազգային Խորհրդի անդամ Կարինէ Խուդաբաշեանը Հայաստանի առաջատար երաժշտագէտներից էր: Նրա խօսքը մեծ կշիռ եւ հեղինակութիւն ունէր, սպասում էր, ընկալում էր հետաքրքրութեամբ, միտք էր շարժում, յաճախ գիտական աշխուժ բանավեճերի առարկայ դառնում, առաջ բերում հետետրոյներ: Խուդաբաշեանն իր ողջ գործունէութեամբ ծառայեց ազգային երգարուեստին եւ լաւագոյնս

կատարեց Կոմիտաս վարդապետի յայտնի ասոյթ-յանձնարարականը՝ «հայն ունի՝ իր երաժշտութիւնը»:

Կարինէ Խուդաբաշեանը մահացաւ 17 Նոյեմբեր 2015ին, Երեւանում:
ԱՆԱՀԻՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

ԳԷՈՐԳ ԳԵՕՐԿԱԿԵԱՆ
(1928-2015)

Գէորգ Շմատնի Գէօրակեանը ծնուել է 12 Օգոստոս 1928ին, Լենինական (այժմ՝ Գիւմրի) քաղաքում: Նոյն թուականին ծնողների հետ տեղափոխուել է Երեւան եւ 1946ին ոսկէ մեդալով աւարտել Երեւանի Ձերժինսկու անուան Միջնակարգ Դպրոցը եւ Երեւանի Չայկովսկու անուան Միջնակարգ Մասնագիտական Երաժշտական Դպրոցը:

1951ին Գէօրակեանը գերազանցութեամբ աւարտել է Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Երաժշտանոցի Տեսական Կոմպոզիտորական Բաժինը (գիտական ղեկավար՝ պրոֆեսոր Գեորգի Տիգրանով): 1952ին աւարտել է Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Երաժշտանոցի Դաշնամուրային Բաժինը՝ պրոֆեսոր Գ. Սարաջեանի դասարանը: 1953-1956՝ սովորել է Հայաստանի ԳԱ ասպիրանտուրայում՝ ռուսամասնութիւնն անցկացնելով Մոսկուայի Չայկովսկու անուան Պետական Կոնսերվատորայում (տեսութեան ամբիոն, գիտական ղեկավար՝ պրոֆեսոր Բորիս Եարուստովսկի):

1957ին աշխատանքի է անցել ՀՍՍՀ ԳԱ Արուեստների Տեսութեան եւ Պատմութեան Սեկտորում (1958ից՝ Արուեստի Ինստիտուտ)՝ որպէս կրտսեր գիտաշխատող: 1960ին նշանակուել է ՀՍՍՀ ԳԱ Արուեստի Ինստիտուտի գիտական քարտուղար: Նոյն թուականից մինչ կեանքի վերջին օրը Արուեստի Ինստիտուտի գիտական խորհրդի անդամ էր:

1961ին պաշտպանել է ատենախօսութիւն՝ «Ռոմանոս Մելիքեան. Կեանքը եւ Ստեղծագործութիւնը» թեմայով եւ ստացել արուեստագիտութեան թեկնածուի գիտական աստիճան: 1964ին Գէօրակեանին շնորհուել է աագ գիտական աշխատակցի գիտական կոչում:

1965ից մինչեւ 2015ը Գէօրակեանն Արուեստի Ինստիտուտի Երաժշտութեան Բաժնի վարիչն էր: 1979ին նշանակուել է ՀՍՍՀ ԳԱ Արուեստի Ինստիտուտի տնօրէնի՝ գիտական գծով տեղակալ, այդ պաշտօնում աշխատելով մինչեւ 2005ը: 2005ին նշանակուել է Արուեստի Ինստիտուտի տնօրէնի խորհրդական:

2007ին պաշտպանել է դոկտորական ատենախօսութիւն՝ *Հայ Դասական Երաժշտութեան Ձեաւորման Ուղիները* վերնագրով եւ ստացել արուեստագիտութեան դոկտորի գիտական աստիճան:

Ծանրակշիռ է Գեօղակեանի վաստակը հայ երաժշտութեան պատմութեան եւ տեսութեան հարցերի ուսումնասիրութեան ասպարէզում: Հայրենական երաժշտագիտութեան կարետոր հանգրուաններից է *Ակնարկ Հայ երաժշտութեան Պատմութեան* ուսումնասիրութիւնը, որի՝ խորհրդահայ երաժշտութեան բաժինը հեղինակել է Գեորգ Գեօղակեանը, ինչպէս նաեւ նրա *Հայ Դասական Երաժշտութեան Ձեւատրման Ուղիները* եւ *էջեր Հայ երաժշտութեան Պատմութիւնից* հիմնարար մենագրութիւնները: Կարետոր նշանակութիւն ունեցան Տիգրան Չոխաճեանի, Ալեքսանդր Սպենդիարեանի, Արամ Խաչատրեանի եւ հայ երաժշտութեան միա դասականների ստեղծագործութեան նրա գիտական ուսումնասիրութիւնները:

Անուրանալի է Գեօղակեանի ներդրումը կոմիտասագիտութեան անդաստանում: 1969ին Կոմիտասին նուիրուած իր հայերէն, ռուսերէն եւ անգլերէն լոյս տեսած մենագրութիւններով եւ գիտական յօդուածներով նա Կոմիտաս երեսոյթը դուրս բերեց ազգային շրջանակներից եւ դիտարկեց Ի. դարի համաշխարհային մշակոյթի համապատկերում: Նրա ջանքերով եւ գիտական խմբագրութեամբ հրատարակուեցին Կոմիտասի *Երկերի ժողովածուի* ակադեմիական հրատարակութեան 7-14րդ հատորները:

Հեղինակ է աւելի քան 150 գրքերի, մենագրութիւնների, գիտական յօդուածների, որոնք լոյս են տեսել Հայաստանի, Ռուսաստանի Դաշնութեան, Վրաստանի, Ուզբէկստանի, Գերմանիայի գիտական ժողովածուներում եւ հանդէսներում: Զեկուցումներով հանդէս է եկել միջազգային եւ հանրապետական բազմաթիւ գիտաժողովներում:

Ողջ կեանքում գիտական եւ գիտակազմակերպական արգասաբեր գործունէութիւնը համատեղել է հասարական աշխուժ գործունէութեան հետ: Նա 1959ից Հայաստանի Կոմպոզիտորների Միութեան (ՀԿՄ) անդամ էր, 1968-1995՝ ընտրուել է ՀԿՄի վարչութեան կազմում, այդ ընթացքում՝ 1973-1991՝ եղել ՀԿՄ վարչութեան քարտուղար՝ երաժշտագիտութեան գծով:

1979-1991՝ ընտրուել է Խորհրդային Միութեան Կոմպոզիտորների Միութեան վարչութեան անդամ, իսկ մինչ այդ՝ 1973ին արժանացել է ԽՍՀՄ Կոմպոզիտորների Միութեան «1972 թուականին թերթերում եւ ամսագրերում տպագրած լաագոյն երաժշտական-քննադատական յօդուածի համար» մրցանակին: 2000ից Հումանիզմի Պրորբէմների Ակադեմիայի ակադեմիկոս էր: Երկար տարիներ ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի արուեստագիտութեան գծով գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհրդի անդամ էր:

Զբաղուել է նաեւ մանկավարժական գործունէութեամբ, գիտական կադրերի պատրաստմամբ: 1973ից դասաւանդել է Երեւանի Կոմիտասի

Անուան Պետական Երաժշտանոցում, 1977ին նրան շնորհուել է դոցենտի, իսկ 1997ին՝ պրոֆեսորի գիտական կոչում: Նրա գիտական ղեկավարութեամբ պաշտպանուել են մի շարք թեկնածուական եւ դոկտորական ատենախօսութիւններ:

Հայրենիքը բարձր է գնահատել Գէորգ Գեղալկեանի ծառայութիւնները: 1980ին նրան շնորհուել է ՀԽՍՀ Արուեստի Վաստակաւոր Գործչի պատուաւոր կոչում, 2003ին եւ 2013ին պարգեւատրուել է ՀՀ ԳԱԱ Վաստակագրով, 2005ին՝ ՀՀ ԳԱԱ Պատուոգրով, 2009ին՝ ՀՀ Մշակոյթի Նախարարութեան Ոսկէ Մեդալով, իսկ 2011ին՝ Մովսէս Խորենացի մեդալով:

Գէորգ Գեղալկեանը մահացաւ 20 Դեկտեմբեր 2015ին, Երեւանում:

ՀՀ ԳԱԱ ԱՐՈՒՅԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏԵԱՆ

(1926-2015)

Փիլիսոփայական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Գէորգ Աբէլի Բրուտեանը ծնուել է 24 Մարտ 1926ին Հայաստանի Սեւքար Գիւղում: 1942ին աւարտել է Թբիլիսիի թիւ 81 հայկական դպրոցը, 1948ին՝ ԵՐՊԻ Շինարարական Ֆակուլտէտը, 1948-1951՝ սովորել է Մոսկուայի Լոմոնոսովի Անուան Պետական Համալսարանի ասպիրանտուրայում: 1951ին պաշտպանել է թեկնածուական, 1961ին՝ դոկտորական ատենախօսութիւն,

դառնալով իր մասնագիտութեան գծով փիլիսոփայութեան ամենաերիտասարդ դոկտորը Խորիրդային Միութիւնում: 1951ին Բրուտեանին շնորհուել է դոցենտի, 1963ին՝ պրոֆեսորի կոչում: 1971ին ընտրուել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 1982ին՝ ակադէմիկոս: 1977-1994՝ եղել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայութեան եւ Բանասիրութեան, 1994-1995՝ եւ 1998-2000՝ Հումանիտար Գիտութիւնների Բաժանմունքի ակադէմիկոս-քարտուղար, 1994-2002՝ նաեւ ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, 2007ից՝ ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական, 2011ից՝ Խաչատուր Աբովեանի Անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի Մետափիլիսոփայութեան, Փոխակերպական Տրամաբանութեան եւ Փաստարկման Միջազգային Գիտահետազոտական Ինստիտուտի նախագահ:

Անուրանալի է Բրուտեանի աանդը գիտության եւ կրթության գործի կազմակերպման բնագաւառում: Նա հիմնադրել եւ ղեկավարել է մի շարք առաջատար ամբիոններ եւ գիտական կազմակերպութիւններ. եղել է Երեւանի Խաչատուր Աբովեանի Անուան Մանկավարժական Ինստիտուտի Փիլիսոփայութեան (1962-1970) եւ ԵՊՀ Փիլիսոփայութեան եւ Տրամաբանութեան ամբիոնների հիմնադիր վարիչը (1970-1986): Մեծ դեր է խաղացել ԵՊՀ Փիլիսոփայութեան եւ Սոցիոլոգիայի Ֆակուլտետի ստեղծման ու կայացման գործում:

Հիմնադիր եւ հեղինակ է մի շարք գիտական ուղղութիւնների եւ մեթոդաբանական սկզբունքների, որոնք համաշխարհային գիտության մէջ նրա անունով են կոչւում: Դրանցից են.- Բազմատրամաբանութեան հայեցակարգը, Փոխակերպական տրամաբանութիւնը, Լեզուաբանական լրացչութեան սկզբունքը: Համաշխարհային լայն ճանաչում ունեն փաստարկման տեսութեան քրուտեանական հայեցակարգը եւ նրա հիմնադրած Փաստարկման Երեւանեան Դպրոցը: Մեծ է Բրուտեանի ներդրումը հայ փիլիսոփայական մտքի հիմնահարցերի եւ հայագիտութեան մեթոդաբանական սկզբունքների մշակման բնագաւառում:

Տարիներ շարունակ ղեկավար պաշտօններ վարելով գիտութեան եւ կրթութեան տարբեր օղակներում՝ Բրուտեանը ծանրակշիռ ներդրում է ունեցել փիլիսոփայութեան, տրամաբանութեան, ընկերաբանութեան, քաղաքագիտութեան եւ հոգեբանութեան բնագաւառներում գիտական նոր հերթափոխի պատրաստման գործում: Շուրջ 30 տարի նախագահել է ԵՊՀ փիլիսոփայութեան գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդը, 1987ին հիմնել եւ ղեկավարել է Հայոց Փիլիսոփայութեան Ակադեմիան, իսկ 2011ից ղեկավարել է ՀՊՄՀ-ում գործող Փիլիսոփայութեան եւ Հոգեբանութեան Մասնագիտական խորհուրդը:

Համաշխարհային Գիտական Ակադեմիայի ցկեանս անդամ էր (1990), Լոնդոնի Դիւանագիտական Ակադեմիայի հիմնադիր անդամ (2000), արժանացել է ԽՍՀՄ, Հայաստանի, արտասահմանեան մի շարք երկրների պետական պարգեւների, բազմաթիւ առաջատար համալսարանների եւ միջազգային հիմնարկների պատուաւոր կոչումների ու պարգեւների: Ղեկավարել եւ անդամակցել է միջանի տասնեակ միջազգային ամսագրերի խմբագրական խորհուրդների, այդ թում՝ Փենսիլվանիայի Համալսարանի *Philosophy and Rhetoric* գիտական հանդէսին:

Հեղինակ է աշխարհի 20 լեզուներով հրատարակուած ու թարգմանուած շուրջ 70 մենագրութիւնների, գրքերի ու դասագրքերի, անլի քան 200 գիտական յօդուածների: Հայագիտութեանն են առնչւում

Բրուտեանի հետեւեալ հրապարակումները: Դեռեա 1954ին, Ստալինի մահից մէկ տարի անց նա, առաջինը լինելով, հրապարակայնօրէն անդրադարձել է Չարենցին՝ «Եղիշէ Չարենցի Փիլիսոփայական Ռուբայիները» յօդուածով: Զբաղուել է մասնատրապէս Դաւիթ Անյաղթի երկերի ուսումնասիրութեամբ՝ *Դաւիթ Անյաղթի Ուսմունքը Տրամաբանության Մասին* (1980), *Ուսմունք Տրամաբանության Մասին. Դաւիթ Անյաղթի Տեսական Ժառանգութեան Գլխաւոր Բովանդակութիւնը* (1980, ռուսերէն), *Դաւիթ Անյաղթ* (1980, հայերէն եւ ռուսերէն), *Դաւիթ Անյաղթի Տրամաբանութիւնը* (1982), *Դաւիթ Անյաղթի Փիլիսոփայութիւնը* (1984, ռուսերէն), խմբագրել է *Դաւիթ Անյաղթը՝ Հին Հայաստանի Մեծ Փիլիսոփան* հատորը (1983): Նրա խմբագրութեամբ է լոյս տեսել *Տարեգիրք ԽՍՀՄ Փիլիսոփայական Ընկերության Հայկական Բաժանմունքի* հատորը (1983): Հեղինակ է նաեւ *Վազգէն Կարապետի Զալոյեան* (1985), *Հայագիտութիւն եւ Մեքահայագիտութիւն* (1999, 2004), *Տիգրան Պետրոսեանը Իմ Յուշաշխարհում* (2007), *Վիկտոր Համբարձումեան* (2007), *Վիկտոր Համբարձումեանը եւ Փիլիսոփայութիւնը* (2008) գրքերի: Նրա խմբագրութեամբ իր ղեկավարած Հայոց Փիլիսոփայութեան Ակադեմիան 1999–2000ին հրատարակել է *Armenian Mind* գիտական հանդէսը: Անուրանալի է նաեւ Բրուտեանի աւանդը համաշխարհային գիտական հանրութեանը Արցախի հիմնախնդրի առարկայական մատուցման եւ արդարացի լուծման ուղիների ներկայացման, ինչպէս նաեւ Թուրքիայի կողմից հայերի նկատմամբ իրականացուած ցեղասպանութեան միջազգային ճանաչման խնդրում համաշխարհային համբաւ ունեցող գիտնականների ներուժի կազմակերպման ասպարէզում:

Գէորգ Բրուտեանը մահացաւ 2015ի Դեկտեմբերին, Երեւանում:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆ

ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Խ. ԱՐՈՎԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ